# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ո Ե Հ-3

**Հանրապետական եռակողմ հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստի**

**2019 թվական, դեկտեմբերի 19, ժամը՝ 16:00**

***Նախագահում էր*** Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Արման Ուդումյանը

***Մասնակցում էին՝***

***Հանձնաժողովի անդամներ՝***

| | |
|---|---|
| Բորիս Խարատյան | Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի (այսուհետ՝ ՀԱՄԿ) նախագահի տեղակալ |
| Համլետ Դանիելյան | Արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ |
| Ժանետա Թորոսյան | Հայաստանի մշակույթի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ |
| Շմավոն Մկրտչյան | Առևտրի, հասարակական սննդի, սպառկոոպերացիայի և ձեռներեցության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ |
| Գագիկ Մակարյան | Հայաստանի գործատուների հանրապետական միության (այսուհետ՝ ՀԳՀՄ) նախագահ |
| Կարինե Համբարձումյան | ՀԳՀՄ խորհրդի անդամ |

***Հանձնաժողովի անդամներին մշտական փոխարինողներ և Հանձնաժողովի անդամների փոխարեն նիստին մասնակցող անձինք՝***

| | |
|---|---|
| Վահագն Լալայան | Էկոնոմիկայի նախարարի խորհրդական (Էկոնոմիկայի նախարարի տեղակալ, Հանձնաժողովի անդամ Վարոս Սիմոնյանի փոխարեն) |

| | |
|---|---|
| Հասմիկ Սարգսյան | Առողջապահության նախարարության անձնակազմի կառավարման վարչության գլխավոր մասնագետ (Առողջապահության նախարարի տեղակալ, Հանձնաժողովի անդամ Լևոն Հակոբյանի փոխարեն) |
| Հասմիկ Բալաբեկյան | Արդարադատության նախարարության իրավական ապահովման վարչության առաջատար մասնագետ (Արդարադատության նախարարության իրավական ապահովման վարչության պետ, Հանձնաժողովի անդամ Անահիտ Անտոնյանի փոխարեն) |
| Լաուրա Հակոբյան | Բանկերի և ֆինանսավարկային կազմակերպությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ (Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հանրային ծառայությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ, Հանձնաժողովի անդամ Անահիտ Ասատրյանի փոխարեն) |
| Տիգրան Շահբազյան | ՓՄՁ հաշվապահների ասոցիացիայի նախագահի տեղակալ (Հայաստանի գործատուների հանրապետական միության խորհրդի անդամ, ՓՄՁ հաշվապահների ասոցիացիայի նախագահ, Հանձնաժողովի անդամ Վահագն Համբարձումյանի փոխարեն) |

***Հրավիրվածներ՝***

| | |
|---|---|
| Ժորա Սարգսյան | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ ԱՍՀՆ) աշխատանքի և զբաղվածության վարչության պետ |
| Նունե Հովհաննիսյան | Աշխատանքի միջազգային կազմակերպության ազգային համակարգող |
| Գայանե Մանուկյան | ԱՍՀՆ հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ |
| Երանուհի Յայլախանյան | ԱՍՀՆ հասարակայնության հետ կապերի բաժնի փորձագետ |
| Նարե Սարգսյան | ՀԳՀՄ գործառնական տնօրեն |
| Կարինե Մադոյան | ՀԱՄԿ աշխատակազմի սոցիալ-տնտեսական և աշխատանքի պաշտպանության բաժնի պետ |

| | |
|---|---|
| Անուշ Ներսիսյան | ՀԱՄԿ մամլո խոսնակ |

***Հանձնաժողովի քարտուղար՝***

| | |
|---|---|
| Արփինե Սարգսյան | ԱՍՀՆ աշխատանքի և զբաղվածության վարչության աշխատանքի և աշխատանքի վարձատրության քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ |

***Բացակայում էին՝***

***Հանձնաժողովի անդամներ***

| | |
|---|---|
| Լևոն Հակոբյան | Առողջապահության նախարարի տեղակալ |
| Վարոս Սիմոնյան | Էկոնոմիկայի նախարարի տեղակալ |
| Անահիտ Անտոնյան | Արդարադատության նախարարության իրավական ապահովման վարչության պետ |
| Սեդրակ Ասատրյան | «Կոնցեռն Դիալոգ» ՓԲԸ-ի տնօրեն |
| Էդուարդ Կիրակոսյան | «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» ՀԿ-ի գործադիր տնօրեն |
| Վահագն Համբարձումյան | Հայաստանի գործատուների հանրապետական միության խորհրդի անդամ, ՓՄՁ հաշվապահների ասոցիացիայի նախագահ |
| Անահիտ Ասատրյան | Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հանրային ծառայությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ |

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Արման Ուդումյանը, ողջունելով ներկաներին, առաջարկեց փոխել Հանձնաժողովի անդամներին նախապես ուղարկված օրակարգի նախագծի հարցերի հերթականությունը, երկրորդ հարցը (Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի նախագծի քննարկում) ներկայացնել առաջինը:

Ա. Ուդումյանի վերոնշյալ առաջարկության վերաբերյալ առարկություններ չներկայացվեցին և Հանձնաժողովը որոշեց հաստատել նիստի օրակարգը հարցերի հետևյալ հաջորդականությամբ.

1. **Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի նախագծի քննարկում**
2. **Սոցիալական գործընկերության կողմերի ներկայացուցիչների՝ 2019 թվականի դեկտեմբերի 10-14-ը Ռուսաստանի Դաշնությունում /Մոսկվայում/ «Եռակողմ սոցիալական երկխոսության խթանում» խորագրով եռակողմ միջտարածաշրջանային համաժողովի մասնակցության արդյունքների ներկայացում**
3. **Այլ հարցեր**

1. **Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի նախագծի քննարկում**

Օրակարգի 1-ին հարցը ներկայացրեց ԱՍՀՆ աշխատանքի և զբաղվածության վարչության աշխատանքի և աշխատանքի վարձատրության քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ, Հանձնաժողովի քարտուղար Արփինե Սարգսյանը:

Նշվեց, որ նոր Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) մշակման աշխատանքների հետ կապված գրություններ են ուղարկվել բոլոր շահագրգիռ և Հանձնաժողովում ներկայացված պետական մարմիններին (Արդարադատության, Առողջապահության, Էկոնոմիկայի և Ֆինանսների նախարարություններ), ինչպես նաև սոցիալական գործընկերներին՝ ՀԳՀՄ և ՀԱՄԿ՝ համապատասխան առաջարկություններ ստանալու նպատակով:

Համապատասխան պետական մարմինների կողմից Նախագծի մշակման առնչությամբ առաջարկություններ չեն ստացվել:

ՀԳՀՄ-ն և ՀԱՄԿ-ը ներկայացրել են գրավոր առաջարկություններ, որոնք կողմերի ներկայացուցիչների մասնակցությամբ աշխատանքային կարգով քննարկվել են ԱՍՀ նախարարի տեղակալ Ա. Ուդումյանի մոտ 2019 թվականի դեկտեմբերի 6-ին կազմակերպված հանդիպման շրջանակներում:

Տեղեկացվեց, որ հիշյալ քննարկումից և քննարկված ու համաձայնեցված առաջարկությունների հիման վրա Նախագծի լրամշակումից հետո առանձին գրությամբ Նախագծի վերաբերյալ առաջարկություններ է ներկայացրել Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հանրային ծառայությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Ա. Ասատրյանը, ով հանդիսանում է նաև Հանձնաժողովում ՀԱՄԿ-ի կողմի ներկայացուցիչ:

Տեղեկացվեց նաև, որ Գործատուների հանրապետական միությունից ևս այդ քննարկումից հետո լրամշակված Նախագծի վերաբերյալ ներկայացվել են հավելյալ առաջարկություններ:

Ա. Ուդումյանի կողմից հարց ուղղվեց ՀԱՄԿ-ի նախագահի տեղակալ Բ. Խարատյանին, թե արդյոք Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հանրային ծառայությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Ա. Ասատրյանի

գրության մեջ կան այնպիսի հարցեր, որ ՀԱՄԿ-ի կողմի համար ընդունելի են և կցանկանային հնչեցնել:

Բարձրացված հարցի առնչությամբ ՀԱՄԿ նախագահի տեղակալ Բ. Խարատյանը նշեց, որ գրության մեջ նշված հարցերի մի մասն արդեն իսկ իրացված են Նախագծում, բայց, այնուամենայնիվ, կան հարցեր, որոնք կցանկանային հնչեցնել և քննարկել:

Այնուհետև Ա. Ուդումյանն առաջարկեց, որ Ա. Սարգսյանը ներկայացնի ՀԳՀՄ-ի առաջարկությունները, իսկ ՀԱՄԿ-ի ներկայացուցիչները ներկայացնեն Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հանրային ծառայությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Ա. Ասատրյանի գրությամբ ներկայացված այն առաջարկությունները, որոնց քննարկումը ՀԱՄԿ-ը, որպես եռակողմ սոցիալական գործընկերության կողմ, համարում է նպատակահարմար:

Ա. Սարգսյանը ներկայացրեց ՀԳՀՄ-ի հետևյալ առաջարկությունները.

1. Առաջարկվել էր Նախագծի 1.3-րդ կետը «ներդրումը» բառից հետո լրացնել հետևյալ բառերով՝ «այդ նպատակով օգտագործելով Հայաստանի գործատուների հանրապետական միության մասնագետների փորձառությունը և այդ ոլորտում հրատարակված գրականությունը» բառերը:
2. Հաջորդ առաջարկությունը վերաբերում էր Հանձնաժողովի նախագահության համար ռոտացիայի սահմանմանը: ՀԳՀՄ-ի առաջարկությունն էր, որ Հանձնաժողովի նախագահությունը փոփոխվի տարին մեկ՝ այսինքն Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի գործողության երեք տարիների ընթացքում կողմերից յուրաքանչյուրը նախագահի մեկ տարի: Սակայն, միաժամանակ առաջարկում էր, որ Հանձնաժողովի նախագահության փոփոխության հետ միաժամանակ Հանձնաժողովի քարտուղարությունն իրականացվի ԱՍՀՆ-ի կողմից:
3. Միաժամանակ, հաշվի առնելով 2-րդ կետում նշված առաջարկությունը, առաջարկվում էր դրան համապատասխան՝ փոփոխություն կատարել Նախագծի՝ Հանձնաժողովի նախագահի լիազորություններին և պարտականություններին վերաբերող բաժնում՝ սահմանելով կարգավորում այն մասին, որ անկախ Հանձնաժողովում տվյալ պահին նախագահող կողմի՝ Կառավարությունում իրավական ակտերի նախագծերի ներկայացման ժամանակ Հանձնաժողովի կարծիքը ներկայացնի Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը:
4. Թվարկվեցին նաև խմբագրական բնույթի մի քանի առաջարկություններ, որոնց մի մասը քննարկումների արդյունքում ընդունվեց, իսկ մի քանիսն էլ Գործատուների հանրապետական միության կողմի ներկայացուցիչների համաձայնությամբ չներառվեցին Նախագծում:

ՀԳՀՄ-ի 1-ին առաջարկության վերաբերյալ ծավալված քննարկումների արդյունքում ԱՍՀ նախարարի տեղակալ Ա. Ուդումյանը նշեց, որ կոնկրետ միայն ՀԳՀՄ-ի անունը Նախագծի հիշյալ կետում նշելը ճիշտ չէ, քանի որ այդ կետում նշված աշխատանքների իրականացմանը մասնակցում են բոլոր կողմերը: Քննարկումների արդյունքում առաջարկվեց Նախագծի 1.3-րդ կետը բաժանել մասերի, 2-րդ հատվածը առանձնացնել և Նախագծի 1-ին բաժնում գրել առանձին պարբերությամբ՝ նախատեսելով հետևյալ ձևակերպումը. Հայաստանի

գործատուների հանրապետական միությունը և Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան պարտավորվում են աջակցել կազմակերպություններում աշխատանքի պաշտպանությանն ուղղված քաղաքականության և համապատասխան ընթացակարգերի մշակմանը և ապահովել դրանց ներդրումը՝ այդ նպատակով օգտագործելով իրենց մասնագետների փորձառությունը և այդ ոլորտում հրատարակված գրականությունը:

ՀԳՀՄ-ի 2-րդ առաջարկության կապակցությամբ ԱՍՀ նախարարի տեղակալ Ա. Ուդումյանը նշեց, որ հնարավոր չէ Հանձնաժողովի աշխատանքների կազմակերպման առումով նման կարգավորում նախատեսելը, որ Հանձնաժողովը նախագահի ՀԳՀՄ-ն կամ ՀԱՄԿ-ը, իսկ քարտուղարության աշխատանքներն իրականացնի ԱՍՀՆ-ն: Ա. Ուդումյանը տեղեկացրեց, որ առաջարկությունը ԱՍՀՆ-ի կողմից ընդունելի կարող է համարվել միայն այն պարագայում, երբ Հանձնաժողովի քարտուղարության աշխատանքները ևս իրականացվեն տվյալ տարում Հանձնաժողովի նախագահող կողմի կողմից:

ԱՍՀՆ աշխատանքի և զբաղվածության վարչության պետ Ժ. Սարգսյանը նշեց, որ ինքը ևս համակարծիք է Ա. Ուդումյանի հետ: Նա նշեց նաև, որ Հանձնաժողովի քարտուղարության աշխատանքներն իրականացնում է ԱՍՀՆ աշխատանքի և զբաղվածության վարչության աշխատողը, ով քաղաքացիական ծառայող է, ունի իր պարտականությունների շրջանակը և հետևաբար, այլ մարմնի ղեկավար անձի կողմից Հանձնաժողովի նախագահության պարագայում Հանձնաժողովի քարտուղարության աշխատանքները չեն կարող իրականացվել ԱՍՀՆ աշխատանքի և զբաղվածության վարչության քաղաքացիական ծառայողի կողմից:

ՀԱՄԿ-ի նախագահի տեղակալ Բ. Խարատյանն էլ տեղեկացրեց, որ ներկա պահին ՀԱՄԿ-ի կողմից չեն կարող իրականացվել Հանձնաժողովի քարտուղարության աշխատանքները և առաջարկեց Հանձնաժողովի նախագահության ռոտացիայի հարցին անդրադառնալ ավելի ուշ, մասնավորապես ձևավորել կողմերի ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խումբ, որը կիրականացնի համապատասխան միջազգային փորձի ուսումնասիրություն և լավագույն փորձի հիման վրա նոր հանգել անհրաժեշտ լուծումների:

Բարձրացված հարցի շուրջ ծավալված քննարկումների արդյունքում՝ ՀԳՀՄ-ի 2-րդ առաջարկության վերաբերյալ կողմերը համաձայնության եկան, որ Հանձնաժողովի նախագահությունն իրականացվի տարեկան ռոտացիայի սկզբունքով, իսկ քարտուղարության աշխատանքները համապատասխանաբար իրականացնի այն կողմը, որը նշված ժամանակահատվածում նախագահում է Հանձնաժողովում:

Միաժամանակ, Հանձնաժողովում կողմերը համաձայնության եկան, որ Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կնքումից հետո 1-ին տարում Հանձնաժողովը նախագահի Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը, 2-րդ տարում՝ ՀԳՀՄ-ն, իսկ 3-րդում՝ ՀԱՄԿ-ը:

Հաշվի առնելով 2-րդ հարցի շուրջ ձևավորված համաձայնությունը՝ Հանձնաժողովի անդամները հավանություն տվեցին նաև ՀԳՀՄ-ի 3-րդ առաջարկությանը:

ՀԳՀՄ-ի առաջարկությունների քննարկումից հետո ՀԱՄԿ-ի նախագահի տեղակալ Բ. Խարատյանը, անդրադառնալով նաև Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հանրային ծառայությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Ա. Ասատրյանի գրությամբ ներկայացված առաջարկություններին, նշեց, որ ՀԱՄԿ-ի կողմից ներկայացված առաջարկություններից մեկը, որն առկա է նաև Ա. Ասատրյանի գրության մեջ, թեև քննարկվել էր 06.12.2019 կողմերի ներկայացուցիչների մասնակցությամբ կազմակերպված

հանդիպման ժամանակ, սակայն տեղ չի գտել Նախագծում: Խոսքը վերաբերում էր Նախագծում գործազրկության նպաստի ներդրման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու կետ նախատեսելուն: Բ. Խարատյանը նշեց, որ Սահմանադրության 83-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք գործազրկության դեպքում ունի սոցիալական ապահովության իրավունք: Ուստի, բարձրացված հարցը կարևորվում է իրենց կողմից և դարձյալ պնդում են, որ ներառվի Նախագծում:

Վերևում բարձրացված հարցի կապակցությամբ Ժ. Թորոսյանը նույնպես նշեց, որ իր կարծիքով ևս Նախագծում նման բովանդակությամբ կետ ամրագրելը պարտադիր է: Վերջինիս կարծիքով քննարկվող Նախագիծը հենց այն փաստաթուղթն է, որի շրջանակներում պետք է քննարկվի գործազրկության նպաստի հարցը: Այստեղ խոսքը աշխատանքը կորցրած մարդու պաշտպանության մասին է: Ուստի այդ իմաստով էլ այդ հարցը նշված փաստաթղթում նեռառելը կարևորվում է:

Բ. Խարատյանի կողմից բարձրացված հարցի առնչությամբ Ա. Ուդումյանը նշեց, որ թեև հարցը քննարկվել է կողմերի մասնակցությամբ կազմակերպված աշխատանքային կարգով հանդիպման շրջանակներում, սակայն նման բովանդակությամբ կետ ամրագրելու վերաբերյալ համաձայնություն ձեռք բերված չի եղել:

Ներկայացված հարցի առնչությամբ Ա. Սարգսյանը տեղեկացրեց, որ ՀԱՄԿ-ի վերոնշյալ առաջարկության հետ կապված Նախագծի 1-ին բաժնում լրացվել է նոր 1.10-րդ կետ, այն բովանդակությամբ, որ կողմերը պարտավորվում են ներկայացնել առաջարկություններ աշխատանքային կարողությունների ուժեղացման, այդ թվում նաև՝ աշխատունակությանը նպաստող մեխանիզմների ձևավորման և բարելավման ուղղությամբ:

Հիշյալ հարցի առնչությամբ ԱՍՀՆ աշխատանքի և զբաղվածության վարչության պետ Ժ. Սարգսյանը ևս նշեց, որ գործազրկության նպաստի վերականգնման վերաբերյալ Նախագծում կետ ամրագրելը ներկա պահին հնարավոր չէ: Ա. Ուդումյանը նույնպես այն կարծիքին էր, որ նման բովանդակությամբ կետ ամրագրելը Նախագծում հնարավոր չէ, քանի որ պետության քաղաքականությունը ներկայում այլ ուղղությամբ է տարվում: Ուստի Ա. Ուդումյանն առաջարկեց ձեռնպահ մնալ Նախագծում «գործազրկության նպաստ» հասկացությունն օգտագործելուց:

Բ. Խարատյանի կողմից ներկայացված հաջորդ առաջարկությունը վերաբերում էր Նախագծի նախաբանին: Մասնավորապես, նախաբանի 5-րդ պարբերությունից առաջարկվում էր հանել այն միտքը, որը նախատեսում էր, որ օպերատիվ կարգով (որը 06.12.2019 քննարկման արդյունքում առաջարկվել էր փոխարինել «հրատապ կարգով» բառերով) որոշումների ընդունում պահանջող նախագծերը կարող են չներկայացվել Հանձնաժողովի կարծիքին: Որպես հիմնավորում Բ. Խարատյանը նշեց, որ Հանձնաժողովի աշխատակարգում չկա որևէ հիմնավորում այն մասին, թե իրավական ակտերի, որ նախագծերն են հրատապ կարգով որոշումների ընդունում պահանջող համարվում:

Բարձրացված հարցի կապակցությամբ Ժ. Սարգսյանը տեղեկացրեց, որ իրավական ակտերի նախագծերը երբեմն ԱՍՀՆ կարծիքի են ներկայացվում 3-5-օրյա ժամկետով, որի ընթացքում ուղղակի ֆիզիկապես հնարավոր չէ կազմակերպել Հանձնաժողովի նիստ և այն քննարկել Հանձնաժողովում: Ժ. Սարգսյանը միաժամանակ նշեց, որ նման դեպքերի պարագայում կարող են այդ նախագծերի վերաբերյալ աշխատանքային կարգով իրազեկել

կողմերին: Ուստի առաջարկվում է Նախագծում այդ բացառության սահմանումը ամեն դեպքում ամրագրել:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ որոշում կայացվեց Նախագծի նախաբանի նշված հատվածը թողնել նույն ձևակերպմամբ և չհանել վկայակոչված բացառությունը նախատեսող դրույթը: Միաժամանակ, ամփոփելով օրակարգի 1-ին հարցի շուրջ ծավալված քննարկումը, Ա. Ուդումյանը առաջարկեց նիստին մասնակցող անձանց այլ առաջարկությունների առկայության դեպքում հնչեցնել դրանք:

Արդարադատության նախարարությունից նիստին մասնակցող Հ. Բալաբեկյանը Նախագծի 5.7-րդ կետի վերաբերյալ ներկայացրեց այն դիտարկումը, որ կետում սահմանվում է պահանջ այն մասին, որ Կառավարության կողմի ներկայացուցչի մշտական փոխարինողը պետք է ներկայացված լինի առնվազն վարչության պետի մակարդակով, մինչդեռ Կառավարության կողմի ներկայացուցիչ համարվող անդամի մասով որևէ պաշտոն զբաղեցնելու նվազագույն պահանջ չի նշվում:

Հ. Բալաբեկյանի կողմից ներկայացված դիտարկման վերաբերյալ քննարկման արդյունքում որոշվեց Նախագծում սահմանել պահանջ նաև Կառավարության կողմի ներկայացուցիչ համարվող Հանձնաժողովի անդամի ներկայացվածության համար:

***Ամփոփելով օրակարգի 1-ին հարցի շուրջ ծավալված քննարկումները՝ օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ Հանձնաժողովը որոշեց.***

***1.1. Հավանություն տալ Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի նախագծի՝ Հանձնաժողովի 19.12.2019 նիստում քննարկված և համաձայնեցված առաջարկություններին համապատասխան լրամշակված տարբերակին:***

**<u>2.</u> Սոցիալական գործընկերության կողմերի ներկայացուցիչների՝ 2019 թվականի դեկտեմբերի 10-14-ը Ռուսաստանի Դաշնությունում /Մոսկվայում/ «Եռակողմ սոցիալական երկխոսության խթանում» խորագրով եռակողմ միջտարածաշրջանային համաժողովի մասնակցության արդյունքների ներկայացում**

«Եռակողմ սոցիալական երկխոսության խթանում» խորագրով եռակողմ միջտարածաշրջանային համաժողովի մասնակցության արդյունքների մասով հակիրճ տեղեկատվություն ներկայացվեց Գ. Մակարյանի և Բ. Խարատյանի կողմից:

Մասնավորապես Գ. Մակարյանի կողմից կարևորվեց սոցիալական գործընկերության հայաստանյան կողմերի և Աշխատանքի միջազգային կազմակերպության (այսուհետ՝ ԱՄԿ) համագործակցությունը: Գ. Մակարյանը նշեց, որ իսկապես կողմերը կարևորում են ԱՄԿ-ի աջակցությունը: Վերջինս միաժամանակ ընդգծեց, որ հայաստանյան սոցիալական գործընկերները պետք է փորձեն հնարավորինս ակտիվացնեն այդ համագործակցությունը:

Գ. Մակարյանը միաժամանակ տեղեկացրեց, որ Մոսկվայում ԱՄԿ ներկայացուցիչների հետ ունեցած հանդիպումների ժամանակ՝ վերջիններս դարձյալ հայտնել են իրենց պատրաստակամությունը տարբեր հարցերով աջակցության համար: Այս առումով վերջինս ԱՄԿ-ի աջակցությունը կարևորեց ՀՀ աշխատանքային օրենսգրքում նախատեսվող

փոփոխությունների նախագծի մշակման, աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության համակարգի կատարելագործման ողղությամբ տարվող աշխատանքներում:

Անդրադառնալով հանրապետական մակարդակում եռակողմ սոցիալական գործընկերության զարգացմանը՝ Գ. Մակարյանը, նշելով մոսկովյան համաժողովին մասնակցության արդյունքները, կարևորեց եռակողմ սոցիալական գործընկերության կողմերի մասնակցությամբ տարեկան 1-2 անգամ փոխվարչապետի մոտ հանդիպումների կազմակերպումը, որտեղ կքննարկվեն հանրապետական մակարդակում սոցիալական գործընկերությանը վերաբերող հարցերը:

Մոսկվայում կայացած համաժողովի արդյունքների մասով Բ. Խարատյանը նույնպես նշեց, որ իսկապես արդյունավետ հանդիպում էր, որի ընթացքում կարևոր շատ հարցեր քննարկվեցին:

Կարևորելով սոցիալական գործընկերության ինստիտուտի զարգացումը բոլոր մակարդակներում՝ Բ. Խարատյանը կարևորեց սոցիալական գործընկերության հարաբերությունները կարգավորող իրավական դաշտի կատարելագործումը և համապատասխան իրավական ակտերի մշակումն ու ընդունումը: Բ. Խարատյանը առաջարկեց, որպեսզի ստեղծվի եռակողմ սոցիալական գործընկերության կողմերի ներկայացուցիչներից բաղկացած աշխատանքային խումբ՝ նշված իրավական հիմքերի մշակման համար:

***Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ Հանձնաժողովը որոշեց.***

***2.1. Ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:***

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ**

1/10/2020

X

ԱՐՄԱՆ ՈՒԴՈՒՄՅԱՆ

Signed by: UDUMYAN ARMAN 3114770103

**ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**
**Ա. ՈՒԴՈՒՄՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ